

**Ալեքսանդր Ս. Մանասյան**  
*Փիլ. գիտ. դոկտոր*

## **ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳԻՏԵԼԻՔԸ ԵՎ ՀԱՎԱՏՔԸ**

**Որպես ուժի և իշխանության աղբյուրներ\***

**Բանալի բառեր** – սեփականություն, գիտելիք, հավատք, ուժի գործոն, սոցիալական ուժ, քաղաքական ուժ, տեղեկատվական հասարակություն, կուսակցություններ:

### **Մուտք**

Պատմության ընթացքի ըմբռնման հարցում կոնֆլիկտային երկխոսության մեջ գտնվող սոցիալ-քաղաքական արդի տեսությունների մրցակցությունը ամենայն հավանականությամբ չի ավարտվի դրանցից որևէ մեկի պարտությամբ կամ հաղթանակով, քանի որ յուրաքանչյուրն առաջին պլան է մղում պատմական գործընթացում մյուս մտեցումների կողմից չնկատվող կամ անտեսվող նրբերանգներ:

Այլընտրական մտեցումների ու հայեցակարգերի գոյության բուն փաստը բացատրվում է հասարակության՝ որպես համակարգի բարդությամբ, նրա գործառնության ու զարգացման համընդգրկուն, սպառիչ նկարագրությունն ու ըմբռնումը գոյաբանական մեկ հիմքից բխեցնելու-իմաստավորելու կամ մեկ հիմքի հանգեցնելու անհնարինությամբ: Այդ հանգամանքը իր հերթին թույլ է տալիս հայտնի հայեցակարգերը դիտարկել ոչ թե իբրև փոխբացառման, այլ լրացական հարաբերության մեջ գտնվող վարկածներ, ինչը «դուռը բաց է թողնում» պատմական ընթացքի մասին այլ վարկածների ու տեսությունների համար: Ստորև առաջադրվում է սոցիալական գործընթացների՝ նախորդների հետ լրացական հարաբերության մեջ գտնվող այլ ընթերցում՝ մեկ այլ հայեցակետից դրանց իմաստավորման համար:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 25.11.2020:

# 1. Ուժի գործոնի հոլովույթը

Հիմնախնդիրը կոհտարկենք փիլիսոփայական-քաղաքագիտական այն վարկածի դիտակետից, համաձայն որի՝ **իշխանություն սերող գործոնները պատմականորեն եղել ու մնում են սեփականությունը, հավատքը և գիտելիքը**: Այս վարկածը լրացվում-ամբողջացվում է այն գաղափարով, որ այդ գործոններն իշխանությանը կապող օղակը **սոցիալական ուժն** է: Մոտեցումը ենթադրում է անդրադարձ իշխանածին այդ գործոններին **սեփականություն-սոցիալական ուժ-իշխանություն, հավատք-սոցիալական ուժ-իշխանություն և գիտելիք-սոցիալական ուժ-իշխանություն** հարաբերությունների պատմական հոլովույթում: Սա առաջարկվող մոտեցման հիմնային-մեթոդաբանական գաղափարն է: Սոցիալական ուժի դիտարկումը որպես իշխանածին գործոններից դեպի իշխանություն տանող կամուրջ ենթադրում է իշխանածնության գործընթացում **սոցիալական ուժ** երևույթի «մասնակցության» բացահայտում, ինչպես նաև անդրադարձ սոցիալական ուժի՝ **քաղաքական ուժի** վերաճման/փոխարկման հարցին:

**Նախ՝ ուժ երևույթի և ուժ<sup>1</sup> հասկացության մասին**: Պարզվում է, որ մենք **ուժ** հասկացությանը դիմում ենք շատ ավելի հաճախ, քան կարելի էր ենթադրել: Ուղղակի կամ անուղղակի ձևով մենք այդ հասկացությանն ենք դիմում՝ բացատրելու ինչպես անկենդան ու կենդանի բնության, այնպես էլ հասարակական կյանքի ամենատարբեր երևույթներ: Ուժի՝ որպես ֆիզիկական ազդեցության/ներգործության գործոնի դերը հիմնային է՝ պայմանավորված նրա նախագո-բնածին լինելու հանգամանքով: Պատահական չէ, որ հենց այդ իմաստով այն առաջինն է դարձել ֆիզիկայի ավարտուն տեսության անդրադարձի առարկա: Խոսքը նյութոսկային մեխանիկայի մասին է, որում ձևակերպված օրենքներում **ուժը** առաջին անգամ դարձել է գիտական տեսության հիմնարար հասկացություն՝ հետագայում տիպային մնալով բնագիտության համար: Նյութոսկից հետո ֆիզիկական տեսական իմաստավորման առարկա է դարձրել ուժի բազմաթիվ տեսակներ (շփման ուժ, առած-գականության ուժ, հոսանքի ուժ և այլն): Հիմնարար է ուժի տեղը կենդանի բնության մեջ: Ֆիզիկական ուժն է որոշում, թե որ գայլն է առաջնորդում ոհմակը, որ արու առյուծն է իշխում ընտանիքում, որ նծույզն է գլխավորում երամակը: Բնությունն ինքն է սահմանել, որ գոյության պայքարում ուժեղը, այլ ոչ թե թույլը պետք է սերունդ թողնի:

Հասարակական կյանքում իրավիճակն այլ է: Բանն այն է, որ այստեղ ուժը միշտ չէ, որ հանգում է ֆիզիկական (մեխանիկական) ուժին, ինչպես

---

<sup>1</sup> Տեքստում առարկաների, երևույթների անունները հետայսու կգրվեն սովորական, իսկ դրանց վերաբերող հասկացությունները՝ թավ տառատեսակով:

բնության մեջ կամ կենդանական աշխարհում: Ֆիզիկական ուժը բնությունից մարդուն փոխանցված և սոցիալական գործառույթ ձեռք բերած երևույթ է: Անկասկած, հասարակության մեջ էլ ուժի՝ որպես անմիջական ներգործության կամ հարկադրանքի նախնական ձևը ֆիզիկական ուժն է եղել: Նախնադարյան համայնքների առաջնորդները ամենայն հավանականությամբ եղել են ֆիզիկապես ամենից ուժեղները: Բայց հետագայում ֆիզիկական ուժի դերը հասարակական կյանքում աստիճանաբար նվազել է ուժի այլ՝ ոչ ֆիզիկական ձևերի ի հայտ գալուն զուգահեռ, և ինչ-որ փուլում համայնքի առաջնորդ պիտի դառնար ուժեղներից ամենից խելոքը/հնարամիտը կամ խելոքներից/հնարամիտներից ամենից ուժեղը: Առօրյա կյանքում և հասարակագիտական տեսություններում ոչ ֆիզիկական ուժերն են նկատի առնվում, երբ խոսվում է կամքի ուժի, գաղափարի ուժի, գիտելիքի ուժի, օրենքի ուժի, հավատքի ուժի, ավանդույթի ուժի, խոսքի ուժի, փաստարկի ուժի, իշխանության ուժի և ուժի այլ դրսևորումների մասին: Առաջին հայացքից անհավանական է թվում, որ տիեզերական ձգողականության կամ առաձգականության ուժը կարող է որևէ ընդհանրություն ունենալ փաստարկի կամ հավատքի ուժի հետ: Բայց նման ընդհանրություն իրականում գոյություն ունի, և դա այն է, որ **ուժ** հասկացության բոլոր կիրառություններում նկատի է առնվում հարաբերության մեջ գտնվող կողմերից մեկի վրա մյուսի ներգործման (ազդեցության) ներունակությունը: Վերը թվարկված ոչ ֆիզիկական ուժերը՝ որպես ազդեցության ու ներգործության գործոններ, կենդանական աշխարհում ու բնության մեջ գոյություն չունեն: Դրանք միայն հասարակությանը հատուկ, հասարակական հարաբերությունների դաշտում դրսևորվող ուժեր են: Դրանք սոցիալական ծագման ուժեր են, որոնք ֆիզիկական ուժը ներառում են որպես իրենց տարրերից մեկը: Միով բանիվ՝ դրանք **սոցիալական ուժեր են, սոցիալական ուժ ընդհանրական երևույթի տեսակներ կամ դրսևորումներ:**

Մեր քննության առարկան սոցիալական ուժերն են: Սակայն մինչ այդ դրանց վերագրվող դերակատարության հնարավոր ոչ համարժեք մեկնաբանությունները կանխելու համար անհրաժեշտ ենք համարում արձանագրել հետևյալը: Ուժը կամ ավելի ձիշտ՝ սոցիալական ուժը որպես հասարակական հարաբերությունների առանցքային երևույթ դիտարկելը սոցիալ-դարվինիզմի ոգով եզրակացություններ անելու հիմք չի տալիս: Մենք կփորձենք ցույց տալ, որ սոցիալական ուժը ոչ միայն պարտադրանքի ու բռնության, այլև հասարակական հարաբերություններում արդարության ու ժողովրդավարության աղբյուր է: Ուժը ինչպես անկենդան ու կենդանի բնության մեջ, այնպես էլ հասարակական կապերում ու փոխազդեցություններում առկա երևույթ է, և դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ ժամանակակից հասարակագիտական գիտակարգերը գործնականում

«յոլա չեն գնում» առանց ուժ/սոցիալական ուժ երևույթի այս կամ այն դրսևորման տեսական իմաստավորման և համապատասխան հասկացությունը իրենց գործիքակազմ ներառելու:

## 2. Ուժի ընկալումը հասարակագիտական տեսություններում

**Սոցիալական ուժ** հասկացության կիրառության վերը թվարկված օրինակները ցույց են տալիս, որ հասարակագիտությանը չի հաջողվել այդ հասկացությունը ճշգրտել ու դարձնել տեսության խստության չափանիշներին բավարարող: Եվ դա այն դեպքում, երբ այդ հասկացությանը դիմելու դեպքերը զանգվածային են: Չնայած դրա կիրառության գրեթե բոլոր դեպքերը պարզ ու թափանցիկ են բովանդակային առումով, այն առավելապես կիրառվում է ինտուիտիվ ձևով՝ հեռու ճշգրտության ու չափելիության այն չափանիշներից, որոնց հասել է բնագիտությունը:

Ֆորմացիաների մասին մարքսյան տեսությունը **ուժը** հասարակագիտական տեսության հիմքում դնելու թերևս ամենահաջողված փորձն է: Ֆորմացիաների հերթագայության գործընթացը կապելով արտադրողական ուժերի զարգացման հետ՝ Մարքսը ուժը դարձրեց հասարակագիտական տեսության առանցքային հասկացություն՝ ներկայացված **արտադրողական ուժերի** տեսքով:

Ուժ երևույթին լայնորեն դիմում են միջազգային հարաբերությունների տեսությունները: Ինչպես հայտնի է, մինչև Առաջին աշխարհամարտը միջպետական հարաբերություններում գործում էր «**jus ad bellum**» սկզբունքը, որով որպես պետության ինքնիշխանության ատրիբուտ էր դիտվում առանց հիմնավորումների ու բացատրությունների մեկ այլ պետության դեմ պատերազմ սկսելու իրավունքը: Միջազգային հանրությանը **ռազմական ուժի**<sup>2</sup> կիրառության այդպիսի ազատության վտանգի գիտակցմանը բերեցին Առաջին աշխարհամարտի ավերիչ հետևանքները: Գիտակցվեց պատերազմի իրավունքի (բռնի ուժի գործադրման) սահմանափակման միջազգային մեխանիզմների կարիքը: Դրան էր ուղղված 1928 թ. եվրոպական պետությունների մեծ մասի կողմից ընդունված Բրիան-Քելոգի դաշնագիրը, որով պետությանը արգելվում էր ագրեսիվ պատերազմ նախաձեռնել մեկ այլ պետության դեմ: Հայտնի է, որ Ազգերի լիգան անկարող եղավ ապահովելու այդ դաշնագրի գործունակությունը:

2 Ռազմական ուժը ուժի այն բնութագիրն/դրսևորումն է, որ ներկայացվում է նաև չափելի մեծություններով՝ զինված ուժերի թվակազմի, զինատեսակների հարվածային ուժի, արագության, ամրության և չափելի այլ հատկությունների տեսքով: Դրանք լրացվում են մարտունակության որակական բնութագրերով, որոնք են՝ հայրենասիրությունը, ռազմարվեստի տիրապետումը, տոկունությունը և այլն:

Երկրորդ աշխարհամարտը օրակարգային դարձրեց արդեն միջուկային զենքի դար մուտք գործած գերտերությունների միջև ռազմական դիմաբախումների կանխարգելման իրավական մեխանիզմներ սահմանելու հարցը: Հիմնվեց ՄԱԿ-ը, որն իր կանոնադրության երկրորդ հոդվածի 4-րդ կետով արգելում է անդամ պետություններին իրենց հարաբերություններում **ուժ կամ ուժի սպառնալիք** կիրառել: Սկզբունքը ավելի բացորոշ ձևակերպմամբ ԵԱՀԿ-ն ամրագրել է 1974 թ. Հելսինկյան եզրափակիչ ակտում: Արգելելով ուժի կամ ուժի սպառնալիքի գործադրումը՝ Հելսինկյան եզրափակիչ ակտը մարդու իրավունքների ու ազատությունների և ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի միջոցով փորձում է սահմանափակել ուժի և բռնության կիրառումը միջազգային ու ներպետական դաշտերում<sup>3</sup>:

Ուժի կամ ուժի սպառնալիքի վրա դրված իրավական արգելքը չի նշանակում, որ այն դուրս է մղված միջազգային կյանքից: Բնավ: Զինված բախումները շարունակվում են, ինչը ուժի գործոնի ավելի համարժեք իմաստավորում է պահանջում: Պատահական չէ, որ միջազգային հարաբերությունների միմյանց հետ մրցակցող տեսություններից հենց **ուժի գործոնը** կարևորող քաղաքական ռեալիզմի տեսությունն է շարունակում մնալ առաջատարը: Հաշվի առնելով XX դարի քաղաքական իրողությունները՝ քաղաքական ռեալիզմի հիմնադիր Հ. Մորգենթաուն համակարգել է իրենից առաջ եղած գաղափարները, առաջադրել նորերը և ներկայացրել դրանք որպես ամբողջական հայեցակարգ<sup>4</sup>: Տեսության անկյունաքարային գաղափարն այն է, որ պետությունները, որոնք միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտներն են, անվերջանալի պայքարի մեջ են միջազգային քաղաքական դաշտում իշխանության հաստատման համար: Այդ պայքարում վճռորոշ գործոնը, ըստ հարացուցի, ռազմական հզորությամբ դրսևորվող **ուժն** է, որով միջազգային հարաբերությունների մի սուբյեկտը մյուսին պարտադրում է իր կամքը: Հարկադրանք ու բռնություն ենթադրող այդ ուժից բացի՝ պետություններն ունեն նաև մյուսներին իրենց կամքը թելադրելու՝ բռնություն չենթադրող քաղաքական, մշակութային ու տեղեկատվական գործիքներ, որոնք կազմում են, այսպես կոչված, **փափուկ ուժի** գինանոցը: Ի վերջո միջազգային հարաբերություններում կարգավորվածություն ու աստիճանակարգություն մտցնող գործոնները նույնպես սերում են ուժից: Դրանք **ուժերի հաշվեկշիռը** և **ուժային կենտրոններն** են: Բոլոր տեսաբանները համակարծիք են, որ դրանք են ձևավորում աշխարհակարգը՝ աշխարհի միաբևեռ, երկբևեռ կամ բազմաբևեռ լինելը:

3 Սակայն, մյուս կողմից, պետությունն իր սահմաններում ուժի գործադրման իրավունքին տիրապետող հաստատություն է, և դեռևս ոչ մեկը չի օտարել այդ իրավունքը կամ կասկածի տակ դրել տվյալ գործառնության օրինակությունը:

4 Տե՛ս **Hans J. Morgentau**. Politics Among Nations. The Struggle for Power and Peace. Third Edition. N.Y., 1961:

### 3. **Սոցիալական ուժ և քաղաքական ուժ** երևույթների գոյաբանական տեսանկյունները

Մարքսից և Մորգենթաուից բերված օրինակները ակնհայտորեն բավարար չեն՝ եզրակացնելու, որ մենք ունենք **ուժի՝** որպես հասարակական գործընթացները կերտող գործոնի մասին ընդհանրական-ընդգրկուն պատկերացում: Պահանջվում է **ուժի՝** որպես սոցիալական երևույթի դրսևորումների ավելի ընդգրկուն նկարագրություն՝ դրանց համարժեք հասկացությունների համակարգում: Ակնհայտորեն դրանցում առանցքային դերակատարություն ունեն **սոցիալական ուժ** և **քաղաքական ուժ** հասկացությունները:

**Ամենից տարածված է սոցիալական ուժի այն ըմբռնումը, ըստ որի՝ այն սոցիալական սուբյեկտի (անհատի, խմբի, խավի, դասակարգի, ազգի և այլ հանրույթների)՝ ուրիշ սուբյեկտ(ներ)ի վրա ներգործելու, նրան(ց) իր տեսակետը (կամքը) պարտադրելու ունակությունն է՝** Սոցիալական ուժը ցանկացած հանրույթի հիմնարար բնութագիր է՝ պայմանավորված հանրույթների փոխգործակցության օբյեկտիվ իրողությամբ: Փոխազդեցությունը ուժ է ենթադրում: Պարտադրանքի, իշխանության, տիրապետության բոլոր երևույթների անմիջապես դիտարկելի աղբյուրը սոցիալական ուժն է<sup>6</sup>: Սոցիալական ուժը քաղաքական ու տնտեսական ցանկացած գործընթացի շարժիչն ու ուղղորդող ուղեկիցն է: Ինչպես ցանկացած ֆիզիկական մարմին օժտված է իր զանգվածին համապատասխան ձգողականության ուժով, այնպես էլ հանրույթներն են օժտված այլ հանրույթների վրա ազդելու կամ նրանց հակազդելու սոցիալական ուժով: Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում ուժը առկա է որպես նրանց անկապտելի բնութագիր: Փոխազդեցությունը և՛ բնության, և՛ հասարակության մեջ ենթադրում է ուժի առկայություն, որը որևէ կերպ երևակում-ներկայանում է մարդուն: Չերևացող, թաքնված, անգործունակ ուժեր չկան ո՛չ բնության, ո՛չ հասարակության մեջ:

Մարդկանց մեծ ու փոքր հանրույթները հասարակության ենթահամակարգեր և փոխգործակցության մեջ գտնվող կոլեկտիվ սուբյեկտներ են միաժամանակ, որոնք ձևավորում են որոշակի **սոցիալական ուժադաշտ՝** այդ սուբյեկտների տարբեր «կշիռներով», հասարակական զարգացումների

5 Հետայսու **հանրույթ** և **հանրություն** հասկացությունները կոիտվեն որպես հոմանիշներ: **Հանրույթ** կամ **հանրություն** ասելով կիսակամանք մարդկանց այնպիսի խումբ, որը որպես հավաքականություն, հարաբերվում է այլ խմբերի հետ. կրում նրանց ազդեցությունը կամ ազդում նրանց վրա՝ լինելով սոցիալական գործընթացների սուբյեկտ և ուրեմն սոցիալական ուժի կրող: Սահմանային դեպքում այդպիսին կարող է լինել նաև անհատը:

6 Ակնհայտ է, որ ֆիզիկական ուժը վճռորոշ դեր կարող է ունենալ անհատների հարաբերություններում, ինչը սոցիալական հարաբերությունների աննշան մասն է կազմում: Հասարակական կյանքը մեծ մասամբ կոլեկտիվ սուբյեկտների հարաբերություններից է ձևավորվում:

վրա ներագդելու միմյանցից տարբեր կարողականությամբ: Դրանով պայմանավորված՝ նրանցից յուրաքանչյուրը մեծ կամ փոքր ազդեցության (ձգողության) դաշտ ունեցող գործոն է, որոշակի սոցիալական ուժի կրող: **Ամեն մի հանրույթ, այսպիսով, իր գոյության փաստով արդեն իսկ որոշակի սոցիալական ուժի կրող է և ուրեմն՝ սոցիալական ուժադաշտի սուբյեկտ:** Սոցիալական ուժի նման ըմբռնումը որոշակի կարգավորվածություն է մտցնում թեմային վերաբերող հասկացությունների դաշտում: Դրանք են՝ **հանրույթ, մեծ հանրություն, հանրութաստեղծ գործոն, սոցիալական ուժ, իշխանություն:** Հասկանալի է, որ հանրութաստեղծ գործոնները ինքնին ուժ չեն, բայց, հանրույթներ ձևավորելով, դառնում են ուժի աղբյուրներ: Մարդկանց միավորող ցանկացած գործոն՝ շահ, նպատակ, սոցիալական իդեալ, արժեք, հավատք, գաղափար և այլն, և այլն, փոխարկվում է սոցիալական ուժի նրանց գործողություններում ու ձեռնարկներում՝ դառնալով դրանց շարժառիթները: Դրանք ձերբազատում և ուղղորդում են մարդկանց ունեցած (բայց հաճախ նիհիղ) ֆիզիկական կարողականությունները, նյութականացնում են դրանք նրանց համատեղ գործողություններում, որոնք դրսևորվում են սոցիալական տարերքների, շարժումների, արշավանքների, ապստամբությունների, ժողովուրդների տեղաշարժի, գաղթի ու հեղափոխությունների տեսքով:

Հասարակական կյանքում հանրույթների սոցիալական ուժի, նրանց գրաված տեղի և դերի գլխավոր ցուցիչներից մեկը հանրույթի անդամների թվաքանակն է: Բայց դա սոցիալական ուժի ցուցիչներից մեկն է միայն, այն, որ «տեսանելի է» անզեն աչքով: Հանրույթի (կոլեկտիվ սուբյեկտի) սոցիալական ուժն ունի բազմաթիվ այլ բաղադրիչներ: Այն պայմանավորված է նաև հանրույթի կազմակերպվածությամբ, միասնությամբ, նրա տրամադրության տակ եղած միջոցներով և դարաշրջանին հարիր այլ գործոններով, որոնցից շատերը դժվարչափելի են՝ ի ցույց դնելով սոցիալական ուժի չափման խնդրի բարդությունը: Բայց խնդրի լուծումն անհնարին չէ: Կան պարզ, չափելիության հարցում կասկածներ չհարուցող օրինակներ: Այդպիսիք մեզ տրամադրում են սոցիալական ուժի դրսևորման բոլոր այն դեպքերը, որոնք վերաբերում են քվեարկությամբ որոշումներ ընդունելուն, ընտրություններին և հանրաքվեներին:

Ժամանակակից ընտրական համակարգը, որ ժողովրդավարության գլխավոր ձեռքբերումներից մեկն է համարվում, չափելի է դարձնում ընտրությանը մասնակցող հանրությունների սոցիալական ուժը: Աշխատանքային կոլեկտիվների կամ բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկության դրված ցանկացած հարց ստանում է այն լուծումը, որի օգտին ավելի շատ ձայն է տրվում: Իրականում «ավելի շատ ձայն»-ը ներկայացնում է սոցիալական այն ուժը, որի կամքով հարցը ստանում է այս կամ այն լուծումը: Այս կամ

այն գործչի օգտին տրված ձայների թիվը ցուցիչն է նրան սատարող սոցիալական այն ուժի, որի «տերը» և դառնում է ընտրվողը: Ընտրողների քանակով ներկայացող սոցիալական ուժը դառնում է նաև ընդունված որոշման արդարացի և օրինական լինելու հիմք: Այդպես են օրենսդիր մարմինները հանրաքվեներով ընդունում սահմանադրություններ, **մեծամասնության կամքի ուժով** այդպես են ընդունվում օրենքներ: Սրանք դեպքեր են, երբ «ուժն է ծնում իրավունքը» հինավուրց արտահայտությունը դադարում է թևավոր խոսք լինելուց, քանի որ այն քաղաքացիական հասարակության առօրյա իրողություն է: Միայն թե այս դեպքերում սոցիալական ուժի նման գործադրումը ոչ միայն հարկադրանքի իրավունքի, այլև արդարության աղբյուր է ընդունվում<sup>7</sup>: Ուժը, որի գործադրման հետ սովորաբար կապում են պարտադրանքի ու բռնության որակներ, այս դեպքում հանդես է գալիս որպես սոցիալական արդարության պայման: Ընտրություններով իշխանության ձևավորման գործընթացում սոցիալական ուժը դառնում է քաղաքական որոշումներ ընդունող ուժ կամ պարզապես քաղաքական ուժ: Որքան մեծ է սոցիալական այն ուժը, որին տիրապետում է մարդկային այս կամ այն հանրությունը, այնքան մեծ է իշխանության մեջ դրա դրսևորվելու հավանականությունը:

#### 4. Քաղաքական ուժ երևույթը

Հանրույթները՝ որպես սոցիալական ուժի կրողներ, քաղաքական կյանքին տարբեր կերպ են առնչվում: Նրանց մի մասն է միայն ներգրավված իշխանության համար պայքարում կամ քաղաքական գործընթացների վրա ազդելու փորձերում: Հասարակական հարաբերություններում իր տեղն ու դերն ունենալով հանդերձ՝ նրանց ձնշող մասը անմիջական մասնակցություն չի ցուցաբերում երկրի քաղաքական կյանքին, չի հետապնդում քաղաքական իշխանության մեջ ներգրավվելու նպատակ: Ոչ կառավարական հասարակական կազմակերպությունները, արտադրական կոլեկտիվները, հայրենակցական ու մշակութային կազմակերպությունները այդ կարգի հանրույթների օրինակներ են: Հանրույթի սոցիալական ուժը վերաճում-փոխարկվում է քաղաքական ուժի միայն այն դեպքում, եթե նա մտնում է իշխանության համար պայքարի մեջ: Սա նշանակում է, որ ամեն մի քաղաքական ուժ ենթադրում է այդպիսին դառնալուն պատրաստ որոշակի հանրույթի գոյություն: Ամեն մի իշխանություն որոշակի ուժի կրող է, իսկ ամեն մի սոցիալական նշանակալից ուժ պոտենցիալ հակում ունի դառնալու իշխանություն: Այս դրույթը կարող է

<sup>7</sup> Փիլիսոփայական հարցը, որ դարեր շարունակ այեկոծել է մարդկային միտքը, այն է, որ սոցիալական ուժի (մեծամասնության կամքի) ծնած իրավունքն ու արդարությունը կարող են ներդաշնակ չլինել արդարության ու ճշմարտության հետ: Եվ դա պայմանավորված է նրանով, որ եթե իրավունքի աղբյուրը սոցիալական ուժն է, ապա նույն այդ սոցիալական ուժը չի կարող դիտվել որպես ճշմարտության աղբյուր: «Չայն բազմաց՝ ծայն Աստոծ» դրույթի ենթատեքստում իրավունքն է, բայց ոչ ճշմարտությունը:



վիճարկվել այն հակադարձամբ, թե ինքը՝ իշխանությունը, դառնում է իշխանակիր հանրության ուժի աճի գործոն: Դա իրոք այդպես է, սակայն դա չի փոխում սկզբունքային հարցադրումն այն մասին, որ ուժը՝ որպես երևույթ, առաջնային է իշխանության նկատմամբ այն իմաստով, որ այն գոյաբանորեն նախորդում է իշխանությանը, և չի կարող լինել իշխանություն, որն օժտված չէ ուժով: Պետությունն ինքը սոցիալական ուժադաշտի սուբյեկտ է, որին **մեծ հանրությունը** օժտել է ուժի օրինական, հրապարակային գործադրման իրավունքով: Պետության պարագայում ավելի, քան որևէ այլ դեպքում, ակներև է դառնում ուժի և իշխանության խորքային, գոյաբանական միասնությունը:

## 5. Սոցիալական ուժի աշխարհիկ և հոգևոր, նյութական և ոչ նյութական աղբյուրները

Սոցիալական ուժը որևէ ձևով միմյանց հետ կապված մարդկանց հանրության ներունակության անկապտելի, բնածին հատկություն է: Այստեղից հետևում է, որ **հանրութաստեղծ ամեն մի գործոն սոցիալական ուժի ձևավորման գործոն է**: Մարդկանց միավորող ցանկացած գործոն՝ շահ, արյունակցական կապ, գաղափար և այլն, դառնում է սոցիալական ուժի գործոն: Հանրություններ ձևավորող գործոնները բազմաթիվ են, մեծ մասը հարափոխ ու անցողիկ, սոցիալապես ոչ նշանակալից: **Մեզ հետաքրքրում են հանրությունների ձևավորման ընդհանրական, հասարակական զարգացումներին մշտապես ուղեկցող և սոցիալական ուժը դեպի իշխանություն ուղղորդող գործոնները, որպիսիք են մասնավոր սեփականությունը, հավատքը և գիտելիքը (գիտությունը)**: Հանրութաստեղծ ընդհանրական այս գործոններն առանձնացված են որպես «պատմության էմպիրիկ նյութում» անմիջապես տրված երևույթներ: Որպես հանրութաստեղծ գործոններ և հետևաբար սոցիալական ուժի աղբյուրներ՝ դրանք տարբեր են իրենց հիմնային բնութագրերով: Սեփականությունը նյութական, աշխարհիկ հարաբերությունների ձևավորման և նյութական կարիքների բավարարման գործոն է: Հավատքը մարդկային հոգևոր (ոչ նյութական, ոչ աշխարհիկ) կարիքների բավարարման գործոն է և մարդկանց համախմբում է այդ հիմքի վրա: Գիտությունը (գիտելիքը) իր ներքին կեցության մեջ ոչ նյութական, բայց աշխարհիկ գործոն է և ծառայում է մարդկային ճանաչողական կարիքների բավարարմանը:

## 6. **Սեփականությունը** որպես ուժի նյութական աղբյուր և հանրութաստեղծ գործոն

Սեփականատիրական հարաբերություններում հասարակական կյանքը երևակվում է իր նյութական կողմերով, իսկ մարդը՝ որպես մի էակ, որն իր ծագումնաբանությամբ դատապարտված է բնության հետ նյութափոխանակության մեջ լինելուն: Դա գոյության և գոյատևման՝ բնությունից նրան տրված նախապայման է: Ապրելու համար մարդը պետք է հայթայթի, ձեռք բերի, ստեղծի, իր տրամադրության տակ ունենա իր պահանջմունքները բավարարող բարիքներ՝ սնունդ, հագուստ, կացարան: **Ակնհայտ է, որ սեփականության երևույթն իր պորտալարով կապված է մարդու՝ կենսական կարիքները բավարարող բարիքները որպես իրենն ունենալու՝ բնությունից նրան տրված պահանջմունքի հետ:**

Սեփականատիրոջ «իշխանությունը» նյութական իրերի նկատմամբ հասարակական գործընթացներում փոխարկվում է սոցիալական ուժի՝ դառնալով իշխանության գործոն սեփականազուրկ մարդկանց նկատմամբ: Հասարակական կյանքի վերարտադրության ընթացքում հողի և արտադրության գործիքների՝ սեփականատիրոջը պատկանելու իրողությամբ նրանն են դառնում բարիքների աղբյուր լինելու հողի ներուժն ու արտադրության գործիքներում ներդրված աշխատանքային էներգիան, որը պահանջվել է դրանց պատրաստման համար, և որը բազմիցս վերարտադրվում է դրանց օգտագործման ընթացքում: Հողի մեջ առկա և արտադրության գործիքների մեջ ներդրված էներգիան սեփականության իրողությամբ նյութական երևույթից վերածում-դառնում են սոցիալական ուժ՝ ապահովելով սեփականատեր փոքրամասնության իշխանությունը սեփականազուրկ մեծամասնության վրա: Որպես իշխանածին գործոն՝ մասնավոր սեփականությունից հազարամյակներ շարունակ սերել ու այժմ էլ շարունակում են սերել տիրապետության-ենթակայության հարաբերություններ: Արդեն ստրկատիրության շրջանում ստրկատիրոջ սոցիալական ուժը գոյանում էր այն հողատարածքներից, արտադրության գործիքներից ու որպես աշխատուժ օգտագործվող այն ստրուկներից, որոնք նա ուներ որպես սեփականություն: Ըստ մարքսիզմի՝ արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն է այն ուժի աղբյուրը, որը դրա տերերին դարձնում է տիրապետող դասակարգ: Անհատին կամ մարդկանց խմբերին, որոնց համար սեփականությունը սոցիալական ուժի և իշխանության աղբյուր է, ընդհանրական ձևով ընդունված է անվանել **տնտեսական մարդ:**

Տնտեսական մարդու՝ մասնավոր սեփականության վրա հենված իշխանությունը իր բնությամբ աշխարհիկ է այն իմաստով, որ այն կենսական

կարիքները բավարարող իրերի ու դրանց արտադրության ու բաշխման կապակցությամբ սեփականատեր ու սեփականագուրկ մարդկանց միջև ծագող հարաբերություն է: Արտադրության նյութական-առարկայական միջոցների՝ որպես սեփականության մասին վերը ներկայացված մեր դիտարկումները կրում են «դասական պատկերացումների» կնիքը: Մեր օրերում արտադրության միջոցների նկատմամբ սեփականատիրոջ իշխանությունը կարող է դրանց անմիջական տիրապետման բնույթ չունենալ: Դրանք միջնորդավորված են ֆինանսական կարողություններով, արժեթղթերով, կառավարման համակարգի առանցքային պաշտոններով, տեղեկատվական հոսքերի նկատմամբ վերահսկողության իրավունքով:

## 7. Հավատքը որպես հանրութաստեղծ ոչ նյութական գործոն և ուժի աղբյուր

Հոգևոր-դավանաբանական գործոնի հանրութաստեղծ ներունակության հիմքն ու աղբյուրը կյանքի իմաստն իր համար պարզելու մարդու անանց պահանջմունքն է: Կյանքը իմաստներով ու արժեքներով ապրելու, փաստերը դրանց լույսի տակ տեսնելու մղումը մարդուն ուղեկցել է այն պահից ի վեր, երբ նա մարդ է դարձել՝ նրա մեջ բորբոքելով զգայապես չտրված, այնկողմնային էությունները «տեսնելու» մղումը: Հավատքն ունեցել է և ունի հանրութաստեղծ մեծ ներուժ: Նրա հիմքում դրված հոգևոր սկիզբը ազգային, դասային պատկանելության սահմաններ չգիտի: Այն եղել ու մնում է իշխանության նյութական սկզբին հակադիր, դրան հակակշռող գործոն: «Ոչ միայն հացի» քրիստոնեական կարգախոսը խտացված ձևով արտահայտում է կյանքի իմաստավորման համար ոչ նյութական, հոգևոր արժեքների անանց դերը նաև մեր օրերում:

Իր նախնական ձևերից՝ հավատալիքներից, պաշտամունքներից, առասպելներից մինչև ընդհանրական ձևերին՝ համաշխարհային կրոններին հասնելը հավատքն անցել է պատմական երկար ճանապարհ՝ գուգահեռվելով աշխարհիկ պատմությանը որպես հասարակական կյանքի՝ նյութականից տարբեր կողմ, որպես նրա հակոռնյան ու լրացումը: Նախապատմական պրիմիտիվ հասարակություններում, որոնցում մարդն անմիջական կախվածություն ուներ բնության կողմից իրեն տրված պատրաստի բարիքներից, կյանքի նյութական սկիզբը բնականորեն գերակա է եղել հոգևորի նկատմամբ: Հազարամյակների տևողությամբ այդ շրջանում պատմությունը ձևավորում էր դիցաբանական աշխարհընկալման գլխավոր ընդդիմախոսին՝ ողջախոհության արմատից սերված բանական մտածողությունը, որը կռվի մեջ պիտի մտներ առասպելների ու հեթանոս աստվածների հետ: Նրանց վճռա-

կան մենամարտի վայրը դարձավ Հին Հունաստանը: Դա հավատքի և բանականության հակամարտության դարաշրջան էր, երբ վերջինս նվաճեց հետագայում անառիկ մնացած դիրքեր՝ արիստոտելյան տրամաբանության ու էվկլիդեսյան երկրաչափության խորհրդանիշներով: Դա բնավ չէր նշանակում բանականության բացարձակ հաղթանակ հավատքի նկատմամբ: Ավելին՝ բանական իմացությունը ձևակերպեց փակուղիներ տանող հարցեր: Ջենոնի ապորիաները, բանական միջոցներով լուծում չստացող պարադոքսային իրավիճակների հայտնագործությունը սասանեցին բանական իմացության նկատմամբ լավատեսությունը՝ ճանապարհ բացելով սկեպտիցիզմի համար: Մի կողմից՝ դա, մյուս կողմից՝ ստրկատիրական կարգերի ճգնաժամը հող տրամադրեցին հավատքին՝ յուրօրինակ ռևանշի համար: Շրջադարձը տեղի ունեցավ մ. թ. 4–5-րդ դարերում, երբ ասպարեզ իջավ սոցիալական ուժի հոգևոր-դավանաբանական մի գործոն, որը հավակնեց իշխանության հետ հարաբերվելու ոչ թե ենթակայության, այլ նրան անմիջապես առնչվելու, նրա բաղադրիչը լինելու դիրքերից: Դա քրիստոնեությունն էր՝ հոգևոր կայսրության մայրաքաղաք Վատիկանով: Եվրոպական պետությունների ու կայսրությունների թագավորներն ու միապետերը դարձյալ խոշոր հողատերերն ու ճորտատերերն էին, և սեփականությունը մնում էր նրանց աշխարհիկ իշխանության գլխավոր աղբյուրը: Սակայն կաթոլիկ ողջ բնակչության առաջ լեզիտիմ լինելու համար թագավորը թագն ու օրհնությունը պիտի ծնկաչոք ստանար հոգևոր կայսրության քահանայապետից: Եկեղեցին ստացավ իր բաժինը իշխանությունից միայն այն բանի շնորհիվ, որ հզոր էր սոցիալական այն ուժը (այն հանրությունը), որն ընդունում էր նրա հոգևոր իշխանությունը: Աշխարհիկ (իմա՝ տնտեսական) կյանքի տերերը՝ եվրոպական միապետերը, անընդհատ ձգտում էին ձեռքբազատվելու հոգևոր իշխանությունից եկող սահմանափակումներից, և այդ միտումներն անընդհատ սաստկանում էին: Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների դուալիզմը վերջնականապես հաղթահարվեց, երբ ֆեոդալիզմի ընդերքում ձևավորվեց զարգացման միտումներով ու տեմպերով ավատատիրականից տարբեր նոր տնտեսություն՝ իր նոր հանրությամբ՝ երրորդ դասով: Դա սոցիալական նոր ուժի կրող հանրույթ էր, որը դարձավ Եվրոպայի տնտեսական վերելքն ու հզորությունն ապահովող հիմնական խավը:

Նոր ժամանակներում Վատիկանի հոգևոր իշխանության թուլացման ու տրոհման հարուցիչները զուգահեռաբար պետք է փնտրվեն մի կողմից եվրոպական ազգային պետությունների՝ որպես հզոր կոլեկտիվ սուբյեկտների և ուժային կենտրոնների ու ագրարային ոլորտից դուրս նոր տնտեսական մարդու ձևավորման, մյուս կողմից՝ հասարակական կյանքում գիտության դիրքերի ամրապնդման գործընթացներում: Նոր սոցիալական հանրության (իմա՝ նոր սոցիալական ուժի) արմատակալումը բարդ ու եր-

կարատև գործընթաց էր, որն ավարտվեց աշխարհիկ իշխանության վրա եկեղեցու ազդեցության թուլացմամբ: Պետությունը անջատվեց եկեղեցուց: Իրավիճակը ստեղծվել է, Մարտին Լյութերի արտահայտությամբ, **աշխարհիկ ու հոգևոր թագավորությունների՝** մեկուկես հազարամյակ տևած կոնֆլիկտային մրցակցության հետևանքով: Բայց, դրանով հանդերձ, հավատքը մեր օրերում մնում է քաղաքական գործընթացների վրա ազդող հանրութաստեղծ հզոր գործոն թե՛ ներպետական կյանքում, թե՛ միջազգային հարթակի վրա: Բավական է նշել Իրանի Իսլամական Հանրապետության օրինակը:

## 8. Գիտությունը (գիտելիքը) որպես հանրութաստեղծ ոչ նյութական գործոն և ուժի աղբյուր

Գիտելիքի՝ որպես հանրութաստեղծ գործոնի գաղափարն ունի նախապատմություն: Մինչ կձևավորվեր գիտությունը, առօրյա մտածողության ու ողջախոհության մակարդակում մարդը գիտելիքը չի հակադրել ուժին, այլ ընդունել է դրանք որպես «երկվորյակ եղբայրներ»: Ուժի և գիտելիքի ներքին կապի մասին հին ժողովուրդների պատկերացումներն ամրագրվել են հին լատինական **«Scientia potentia est» («Գիտելիքն ուժ է»)** դիպուկ ասացվածքում<sup>8</sup>: Այնքան անվիճելի է եղել գիտելիքի՝ որպես ուժի աղբյուրի գաղափարը, որ այն դարեր շարունակ նշվել է որպես ինքնին հասկանալի մի բան: Հասարակության մեջ գիտելիքի՝ որպես ուժի աղբյուրի գաղափարի տարածման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Նոր ժամանակներում, երբ մարդկությունը մուտք գործեց արդյունաբերական քաղաքակրթության դարաշրջան՝ ակնհայտ դարձնելով տնտեսական առաջընթացի կախվածությունը գիտելիքից: Բնական գիտությունների ու մաթեմատիկայի առջև դրվեց տնտեսության գիտատեխնիկական ապահովման հասարակական պատվերը: Գիտելիքի սկզբունքային դերը արդյունաբերական քաղաքակրթության մեկնարկի գործընթացում Ֆրենսիս Բեկոնի շնորհիվ ընդհանրական ձևով արտացոլվեց «գիտելիքն ուժ է» բանաձևում, որն այս անգամ, ի տարբերություն նախորդ շրջանների, նախանշում էր հասարակական զարգացման նոր հետազիծը: Սակայն, դրանով հանդերձ, Նոր ժամանակներում **«գիտելիքն ուժ է»** գաղափարը ավելի շուտ գիտակցվել է որպես տեխնիկական-տեխնոլոգիական առաջադիմության կարգախոս: Առավելագույնը, որը ձեռք է բերել մինչամարքայան հասարակագիտությունը Օուենի և Մեն Սիմոնի շնորհիվ, հետագայում գնահատվել է որպես սոցիալական վերափոխությունների ուստ-

<sup>8</sup> Ուշագրավ է այն փաստը, որ լատիներեն «Scientia potentia est» արտահայտության «potentia» բառն ունի ոչ միայն ուժի և հզորության, այլև իշխանության իմաստ:

պիստական ծրագիր: Հարցին անդրադարձել է նաև Մարքսը: Քաջ հայտնի է 1844 թ. գրված «Իրավունքի հեգելյան փիլիսոփայության քննադատության շուրջ» հոդվածում բանաձևի տեսքի բերված նրա միտքն այդ մասին՝ «տեսությունը դառնում է մատերիական ուժ, հենց որ տիրում է զանգվածներին»<sup>9</sup>: Համանման տեսակետ արտահայտած իր նախորդների պես Մարքսը չի կոնկրետացնում, թե գաղափարը (տեսությունը) ինչպես է դառնում մատերիական (նյութական) ուժ: Նա արձանագրում է այն իբրև ակնհայտ, հավելյալ բացատրություններ չպահանջող իրողություն և ընդգծում գաղափարի (տեսության) հանրութաստեղծ (զանգվածներին իշխելու) կարողականությունը: XX դարի երկրորդ կեսին թեմային առնչվող գործերից ամենից աղմկահարույցը թերևս էլվին Թոֆլերի՝ «Իշխանության կերպափոխումները՝ գիտելիքը, հարստությունը և բռնությունը, 21-րդ դարի շեմին» («Power Shift: Knowledge, Wealth, and Violence at the Edge of the 21st Century»)՝<sup>10</sup> վերտառությամբ գիրքն էր: Ինտրիգային լրագրողական ոճով գրված «Իշխանության կերպափոխումները...» հսկայական էմպիրիկ նյութի հիման վրա փաստերի թարմ մեկնաբանություններով, անսպասելի եզրակացություններով ու կանխատեսումներով հագեցած աշխատություն է: Թոֆլերը հայացքն ուղղում է տնտեսության (առաջին հերթին՝ արդյունաբերության) մեջ գիտելիքի նոր դերակատարությանը, նրա հարուցած տեղաշարժերին: Իր ժամանակակիցների՝ Մ. Մաքլյուհենի, Դ. Բելլի, Մ. Կաստելի նման նա գտնում էր, որ տեխնիկական-տեխնոլոգիական ձեռքումների շնորհիվ մարդկությունը հայտնվել է **տեղեկատվական հասարակություն** անունը կրող հանգրվանում, որտեղ ևս գիտելիքն ուժի աղբյուր է: Բայց իր նախորդների ու ժամանակակիցների նման Թոֆլերի մոտ նույնպես «գիտելիքն ուժ է» բանաձևը, ըստ էության, մնում է ազատ մեկնաբանությունների հնարավորություններով այլաբանություն, մնում է որպես թևավոր խոսք:

Խնդիրը «գիտելիքն ուժ է» բանաձևի՝ ակնհայտության քողի տակ թաքնված իմաստի այնպիսի բացորոշումն է, որն այն դուրս կրերի թևավոր ստեղծի դաշտից: Նախ նկատենք, որ տարբեր են սոցիալական ուժ ձևավորելու բնագիտական-տեխնիկական և հասարակագիտական գիտելիքների «ուղիները»: Գիտության վերջին խոսքով սարքված հաստոցում ներդրված գիտելիքը սոցիալական ուժ է դառնում միայն սեփականության հարաբերություններում հաստոցի ներգրավվածության շնորհիվ: Այսպիսին է սոցիալական ուժ դառնալու բնագիտական-տեխնիկական գիտելիքի ուղին: Նրա խնդիրը նյութի մեջ (ջրաղացից մինչև ջրածնային ռումբ ու ատոմակայան) բնության ուժերի բացահայտումն է: Արտադրության միջոցնե-

9 Ст. Маркс К. и Энгельс Ф., Соч. т. 1, М., 1955. с. 422, 428:

10 Գիրքը ռուսերենով՝ «Метаморфозы власти; знание, богатство и сила на пороге XXI века» վերտառությամբ լույս է տեսել Մոսկվայում 2003 թ. (ռուս թարգմանիչները բնագրի «Violence» (բռնություն) բառը նպատակահարմար են գտել թարգմանել «сила» (ուժ) բառով):

րում նյութականանալով՝ բնագիտական գիտելիքը մեծացնում է այն անհատի կամ կոլեկտիվ սուբյեկտի սոցիալական ուժը, որի տրամադրության տակ որպես սեփականություն գտնվում են այդ միջոցները: Արդարացի էր Էլվին Թոֆլերը, երբ պնդում էր՝ «Գիտելիքի նկատմամբ վերահսկողություն. ահա մարդկության բոլոր ինստիտուտների մակարդակով ապագա համաշխարհային ճակատամարտերի էությունը»<sup>11</sup>: Պարզ է դառնում, թե ինչու գյուտերը, որ խոստանում են արագ ու նշանակալից փոխհատուցում, արտոնագրում են՝ դրանք վաճառելու կամ ուրիշների կողմից դրանց ներդրումից իրենց եկամուտի մասն ունենալու համար: Արտադրության միջոցների նման այդ գիտելիքը դառնում է սեփականություն և արտոնագրման կամ ֆիրմային գաղտնիքի միջոցով դառնում անձեռնմխելի:

Բոլորովին այլ բնույթ ունի սոցիալական գիտելիքը: Նախ ակնհայտ է, որ, ի տարբերություն բնագիտական ու տեխնիկական գիտելիքի, սոցիալական գիտելիքը կրում է քաղաքական լիցքեր: Բայց կա ավելի կարևոր տարբերություն: **Եթե բնական գիտելիքը սեփականության հարաբերություններում ներառվելու շնորհիվ է դառնում սոցիալական ուժի աղբյուր, ապա սոցիալական գիտելիքը այդպիսին է դառնում՝ շրջանցելով սեփականության հարաբերությունները**<sup>12</sup>: Այդ պատճառով էլ սոցիալական գիտելիքը արտոնագրման ենթակա չէ, քանի որ չի կարող ներկայացվել այնպիսի ապրանքի տեսքով, որի ներդրումը շահույթ կապահովի: Եթե բնագիտական գիտելիքի ներդրման դաշտը նյարդաբուժությունից մինչև ատոմակայան ընկած նյութական դաշտն է, ապա սոցիալական գիտելիքի ներդրման դաշտը հասարակական գիտակցությունն է: Թե՛ բնագիտական, թե՛ սոցիալական գիտելիքների «արդյունահանողը» գիտնականն է, բայց տարբեր են դրանց ներդրողները և ներդրողների շարժառիթները: Բնագիտական-տեխնիկական գիտելիքի ներդրողը տնտեսական մարդն է, որը հետամուտ է տնտեսական մրցակցության մեջ հաղթանակի: Նա դեմ չէ արտադրության մեջ բնագիտական-տեխնիկական գիտելիքների, նոր հայտնագործությունների ներդրմանը՝ դրանում տեսնելով տնտեսական մրցակցության մեջ հաղթելու գրավականը: Այդ գիտելիքի մեջ նա մեր օրերում էլ տեսնում է իր «տնտեսական դաշնակցին»: XX դարում գրանցված տեխնիկական ու տեխնոլոգիական գլոբալ բնույթի բոլոր ձեռքումներն ունեցել են (և ունեն) երկու շարժիչ՝ մրցակցությունը, որն ընդհանրապես տնտեսական առաջընթացի սոցիալական շարժիչն է, և բնագիտական-տեխնիկական գիտելիքը: XX դարը, ձիշտ է, արձանագրել է մեկը մյուսին հաջորդած պատերազմների ու տնտեսական ճգնաժամների պատճառով համաշխարհային տնտեսության

11 Թոֆլեր Է., Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, Եր., 2006, էջ 84:

12 Գրքի կամ համացանցային հոդվածի տեսքով վաճառքի հանված սոցիալական գիտելիքը կարող է եկամուտ բերել հեղինակին, բայց ոչ իշխանություն, եթե հեղինակը չի ձգտում դրան: Նրա առաջադրած գաղափարները ցանկացած ոք կարող է օգտագործել այդ նպատակով:

անկումներ, բայց և տեխնիկական ու տեխնոլոգիական այնպիսի ճեղքումներ, որոնց շնորհիվ վերջին վաթսուն տարվա ընթացքում ուղղակի իմաստով փոխվել է մերձավոր ուղեծրերից երևացող «Երկիր մոլորակի դեմքը»: Կարող է տարօրինակ հնչել, բայց տեխնոլոգիական-տեխնիկական առաջընթացը, որ գրանցում է երևակայության սահմաններում չտեղավորվող արդյունքներ, թե՛ առանձին երկրների և թե՛ գլոբալ մասշտաբներով չի ապահովում իրեն համարժեք տնտեսական աճ: Անընդհատ խորանում է հասարակության ունևոր վերնախավի և մնացյալ զանգվածի տնտեսական կարողականության և ունեցվածքային վիճի, հանգամանք, որ ինքնին համաշխարհային տնտեսական համակարգի ներքին ձգնաժամի ցուցիչ է: Բայց ոչ միայն դա: Սոցիալական ուժը, որը տնտեսական մարդը ձեռք է բերում բնագիտական-տեխնիկական գիտելիքներն իրեն ծառայեցնելով, նրան թույլ է տալիս ընդլայնել իր իշխանության սահմանները տնտեսության ոլորտից դուրս՝ քաղաքական դաշտում: Ընդ որում, դա կարող է հանգեցնել այնպիսի կառույցների ստեղծմանը, որոնք հաշվետու չեն պետությանը, դուրս են հանրային վերահսկողությունից և նրա ձեռքում դառնում են հենց պետության վրա իշխելու գործիքներ: Միաժամանակ նա զգուշությամբ է մոտենում ու հաճախ նաև թշնամաբար է տրամադրված հասարակական զարգացումների մասին այն ուսմունքներին ու քաղաքական նախագծերին, որոնցում արծարծվող կամ հիմնավորվող՝ սոցիալական արդարության նորովի մեկնաբանվող գաղափարները վտանգում են իր շահերը, տանում դեպի սոցիալ-տնտեսական համակարգի՝ իր համար անցանկալի վերափոխություն:

Քաղաքական մարդը սկզբունքորեն դեմ չէ բնագիտական-տեխնիկական գիտությունների զարգացմանն ու դրանց հիմքի վրա տնտեսական առաջընթացին: Սակայն նրա գոյության և գործունեության հիմքն ու հենքը, իշխանության համար պայքարի նրա զենքը հասարակական գիտությունն է և դրա հիմքի վրա հասարակարգային հիվանդությունների ախտորոշումն ու դրանց «բուժման դեղատոմսերի» առաջադրումը: Նա քաղաքական մրցակցության մեջ է մտնում՝ հասարակությանը ներկայացնելով նրա համար ընկալելի և ավելի արդար հասարակարգի տեսլական: **Քաղաքական մարդը տնտեսական մարդու նյութական ուժին հակադրում է գիտելիքի (գիտության) ոգեղեն-աշխարհիկ ուժը, սեփականության իշխանածին ուժին՝ գաղափարի իշխանածին ուժը՝ մարմնավորված սոցիալական ինքնակազմակերպման իր կողմից առաջադրվող իդեալներում և դրանց հասնելու նախագծերում:** Այստեղից էլ այն վախը, որ տնտեսական մարդն ունի այդ գիտելիքի նկատմամբ:



## 9. Կուսակցությունները որպես սոցիալական գիտելիքի պատվիրատուներ

Ասվածից բխում է նաև մեկ այլ կարևոր եզրակացություն, և դա այն է, որ քաղաքական կյանքի կուսակցականացման պայմաններում իշխանության մեջ հայտնված կուսակցություններն են դարձել ճգնաժամերի հաղթահարման և սոցիալական զարգացման գիտական նախագծերի կենսագործման գլխավոր սուբյեկտները, քանի որ հենց նրանք կարող են այդ նախագծերը դարձնել պետական քաղաքականության մաս: Գիտականորեն հիմնավորապես մշակված ամենախոստումնալից սոցիալական ծրագրերը կամ գաղափարները կարող են մնալ գրքերում, հրապարակայնորեն հնչեցված առաջարկություններում, ակադեմիական ու համալսարանական լսարաններում ու աշխատասենյակներում, եթե չի գտնվում քաղաքական այն ուժը (ասել է թե՛ կուսակցությունը), որը որդեգրում է դրանք և, գտնվելով իշխանության մեջ կամ հասնելով իշխանության, պայքարում է դրանց ներդրման համար: Այս հանգամանքը ենթադրում է կուսակցությունների կողմից հասարակական գիտությունների հանդեպ որոշակի վերաբերմունք, քանի որ համագգային ցանկացած սոցիալական նախագիծ, եթե այն հավակնում է տալու ազգային առաջընթացի առջև ծառայած խնդիրների համարժեք ըմբռնումը և առաջադրելու դրանց հաղթահարման ուղիները, պարտավոր է դիմել գիտությանը: Ազգանպաստ քաղաքական բոլոր նախագծերի ու գաղափարների ճանապարհը գիտությունից դեպի կյանք անցնում է «կուսակցական դաշտով»: **Որքան կուսակցությունը հեռու է իր գաղափարախոսության գիտական հիմնավորման անհրաժեշտության ըմբռնումից, այնքան մոտ է մարդկանց այնպիսի կազմակերպված խումբ լինելուն, որը հետամուտ է պետությունը միայն իր խմբային շահերին ծառայեցնելուն և իշխանության է ձգտում հանուն իշխանության:** Հասարակագետների ազգային համայնքը (հատկապես նրա ակադեմիական հատվածը) իր հերթին պետք է հետամուտ լինի ինչպես ընթացիկ օրակարգային սոցիալական խնդիրների օբյեկտիվ վերլուծությանը, այնպես էլ ազգային զարգացման գիտական նախագծերի առաջադրմանը:

Եվ այսպես, սոցիալական գիտելիքը հասարակական գիտակցության մեջ ներդրողը քաղաքական մարդն է, որը հետամուտ է քաղաքական մրցակցության մեջ հաղթանակի՝ քաղաքական իշխանության: Իշխանության համար պայքարը սոցիալ-քաղաքական հայեցակարգերի, սոցիալական նախագծերի պայքար է, որոնք որդեգրում և փորձում են հասարակական գիտակցության մեջ ներդնել մրցակցող թիմերը՝ կուսակցությունները: Երկրին վերաբերող մասշտաբային ցանկացած գիտական նախագծի կենսագործումը պետության իրավասության խնդիր է, որը մեր օրերում մարմնա-

վորում է «կուսակցական կոստյումով» իշխանության հասած քաղաքական մարդը, որը պետք է լինի սոցիալական գիտության գլխավոր պատվիրատուն: Արևմուտքի զարգացած պետություններում կուսակցություններն ունեն իրենց սոցիալ-քաղաքական (գաղափարախոսական) ուղեգծի տեսական հիմնավորման հաստատություններ՝ հետազոտական կենտրոններ, վերլուծական խմբեր, դրանց տրամադրության տակ գտնվող ամսագրեր ու թերթեր: Մեր ազգային «նորատունկ կուսակցություններից» ոչ մեկը նման ծառայություններ չունի և, ըստ երևույթին, չի կարող ունենալ տեսանելի ապագայում: Խնդիրը միայն ֆինանսական հնարավորությունների տրամադրմամբ չէ պայմանավորված: Այդ կուսակցությունները չունեն տեսականորեն հիմնավորված սեփական գաղափարախոսություն, չունեն ասելիք: Ավանդական կուսակցություններից այս դաշտում թերևս ամենից լուրջ ավանդույթներ ունի ՀՅԴ-ն: **Այս պայմաններում հատուկ կարևորություն է ստանում կուսակցությունների և հասարակագիտական համայնքի միջև կապը, որով գոնե մասամբ կարելի է լցնել գիտության և քաղաքական կյանքի միջև այն վիհը, որ առկա է մեզանում, և տեսական լրջություն հաղորդել կուսակցական կյանքին՝ ընդհանրապես ու քաղաքական զարգացումների շուրջ կուսակցությունների խոսույթին:**

**Ալեքսանդր Ս. Մանասյան** – աշխատանքները վերաբերում են ինստիտուցիոնալ տեսությանը և Արցախյան հարցի պատմամշակութային և իրավաքաղաքական տեսանկյունների: Ունի հարյուրից ավելի հրատարակումներ հայերենով, ռուսերենով, անգլերենով, գերմաներենով և պարսկերենով:

Summary

## **PROPERTY, KNOWLEDGE AND FAITH**

As sources of power and domination

Alexander S. Manasyan

**Key words** – property, knowledge, faith, force factor, social force, political force, information society, parties.

The article substantiates the idea of force as a universal phenomenon in inanimate, in animate nature, as well as in a society in which it acts as a factor in the regulation of social relations. The key concept of the general idea is the concept of social power, the main sources of which are property, faith and knowledge. Social power is the ability of one subject to influence another, to impose his point of view

(will) on him. Social strength is an innate feature of any human society, just as the force of gravity of any body. If there is a community of people connected with each other, then it is endowed with social power by the fact of its existence. The immediate observable source of all forms of coercion, power, domination is social power. Social power is the engine of any political and economic process and its guiding companion. The society of people that enters the struggle for power acts as a political force. Property, faith, and knowledge differ from other factors in shaping society in that they have functioned steadily throughout human history, forming power-oriented societies. It is obvious that the emergence of property is associated with a natural necessary need of man. In order to live, a person must acquire, create, have at his disposal goods that meet those needs: food, clothing, shelter. The phenomenon of property is related to the natural need to have the goods that meet the vital needs of man. In the course of the reproduction of social life, the energy invested in the instruments of production is repeatedly reproduced during their use, it turns from a material force into a social force, ensuring the power of the ruling minority over the disadvantaged majority. As a source of power, private property began millennia ago and still engenders a relationship of domination. Already at the stage of slavery, the social power of the slave owner flowed from the lands, the instruments of production and the slaves used as labor, which he owned. Often these days, the owner's power over the means of production is not direct control over them. They are mediated by financial capacity, securities, key management positions and the right to control information flows. The person or group of people for whom property is a source of social power is commonly referred to by the common name as economic person. Faith also had and has tremendous community building potential. The principle underlying it knows no boundaries of nationality or class. He has been and remains a counterbalance to the material beginnings of power. The motto of Christianity "not only bread" in a condensed form expresses the transcendent role of spiritual values outside the material realm for the meaning of life. The ideas of the ancient peoples about the inner connection between power and knowledge are fixed in the Latin saying "Scientia potentia est" ("Knowledge is power"). The principled role of knowledge in the beginning of industrial civilization, thanks to Francis Bacon, found its general reflection in the formula "knowledge is power", which this time, in contrast to its use in previous periods, marked a new trajectory of social development. The role of the natural and social sciences varies considerably in political processes. If the inclusion of natural knowledge in property relations becomes a source of social power, then social knowledge becomes such, bypassing property relations. The investor of natural and technical knowledge is an economic person who pursues victory in economic competition. The investor of social knowledge in the public consciousness is a political person who aspires to political

power. The struggle for power in its purest form is a struggle of socio-political concepts, social projects that competing parties are trying to introduce into public consciousness. The implementation of any large-scale scientific project related to the country is a matter of state competence, which today embodies the politics of a person who came to power in a “party costume”. He should be the main customer of social knowledge.

Резюме

## **СОБСТВЕННОСТЬ, ВЕРА И ЗНАНИЕ**

Как источники силы и власти

Александр С. Манасян

**Ключевые слова** - собственность, знание, вера, фактор силы, социальная сила, политическая сила, формационное общество, партии.

В статье обосновывается идея силы как универсального явления в неживой и живой природе, а также в обществе, в котором она выступает как фактор регулирования общественных отношений. Ключевым в общей идее является понятие социальной силы, главными источниками которой являются собственность, вера и знание. Социальная сила - это способность одного субъекта влиять на другого, навязывать ему свою точку зрения (волю). Социальная сила - это врожденное свойство любого человеческого сообщества, так же как сила тяжести любого тела. Если есть сообщество связанных между собой людей, то оно фактом своего существования наделено социальной силой. Непосредственным наблюдаемым источником всех форм принуждения, власти и господства является социальная сила. Социальная сила - двигатель любого политического и экономического процесса и его спутник. Собственность, вера и знания отличаются от других факторов формирования общества тем, что они стабильно функционировали на протяжении всей истории человечества, формируя общества, ориентированные на власть. Очевидно, что появление собственности связано с природной необходимостью иметь блага, удовлетворяющие жизненные потребности человека. Чтобы жить, человек должен приобретать, создавать, иметь в своем распоряжении товары, которые удовлетворяют эти потребности: пищу, одежду, жилье. В ходе воспроизводства общественной жизни энергия, вложенная в орудия производства, многократно воспроизводится в течение их использования и превращается из материальной силы в социальную силу, обеспечивая власть правящего меньшин-

ства над обездоленным большинством. Как источник власти, частная собственность зародилась тысячелетия тому назад и до сих пор порождает отношения господства. Уже на стадии рабства социальная власть рабовладельца проистекала из земель, орудий труда и используемых в качестве рабочей силы рабов, которыми он владел. В наши дни часто власть собственника над средствами производства не выявляется в виде прямого контроля над ними. Она опосредована финансовыми возможностями, ценными бумагами, ключевыми руководящими должностями и правом контролировать информационные потоки. Лицо или группу людей, для которых собственность является источником социальной силы, обычно называют общим именем **экономический человек**. Огромным потенциалом формирования сообществ обладает вера. Начало, лежащее в его основе, не знает границ национальной, классовой принадлежности. Она была и остается противовесом материальным истокам силы и власти. Девиз христианства «не хлебом единым» лаконично выражает трансцендентную роль духовных, нематериальных ценностей для смысла жизни. Представления древних народов о внутренней связи между силой и знанием закреплены в латинском изречении *Scientia potentia est* («Знание – сила»). Принципиальная роль знания в зарождении индустриальной цивилизации, благодаря Фрэнсису Бэкону, нашла свое общее отражение в формуле «Знание - сила», которая на этот раз, в отличие от ее использования в предыдущие периоды, обозначила новую траекторию общественного развития. Роль естественных и социальных наук в политических процессах существенно различается. Если включение естественного знания в отношения собственности становится источником социальной власти, то социальное знание становится таковым, минуя отношения собственности. Инвестор естественных и технических знаний - экономический человек, стремящийся к победе в экономической конкуренции. Инвестор социальных знаний в общественное сознание - политический человек, стремящийся к политической власти. Общество людей, вступающее в борьбу за власть, действует как политическая сила.

Борьба за власть в чистом виде - это борьба социально-политических концепций, социальных проектов, которые конкурирующие партии пытаются внедрить в общественное сознание.

## REFERENCES

1. Marks K. I Engel's F., Soch., t. 1, M., 1955. (In Russian).
2. T'ofler Ё., Gitelik'n u ishkhanut'yuně teghekatvakan hasarakut'yan mej, Yer., 2006 (In Armenian).